
Շամիրամի Առասպելը

Գրեց Մանուկ Աբեղյան

Արարատ: Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և
բարոյական գիտելեաց

Էջմիածին 1901

Solar Anamnesis Edition

CC0 1.0 Universal

Աղբիւրը: — Շամիրամի և Արայ գեղեցկի մասին պատմելիս (Ա. Ժե.) Խորենացին աղբիւր չէ յիշում, ոչ Սար Աբաս և ոչ առասպել կամ երգ:¹ Բայց, ինչպէս արդէն տեսել ենք (Ը. գլ.), ուրիշ անդից գիտենք, որ «ի Հայկայ մինչև ցԱրայն Գեղեցիկ, զոր սպանեալ կաթոնն Շամիրամ» (Ա. ե.), ուստի և Արայի պատմութիւնն առնուած է Սար Աբասից: ԺԷ. գլխի մէջ ևս, ուր պատմուած է Շամիրամի կոտորելն իւր որդիներին, նորա կրիւր Ջրադաշտի հետ և փախուստը Հայաստան և նորա սպանուելն իւր որդի Նինուասից, աղբիւր չէ յիշուած: Բայց յաջորդ ԺԸ. գլխի մէջ յայտնում է, որ այդ պատմութիւնն առած է Սար Աբասից: Այդ գլխի վերնագիրն է. «Յաղագս թէ որպէս հաւաստի նախ լեալ պատերազմ նորա ի Հնդկա և զկնի մահուան (մահ) նորա ի Հայս»,² այսինքն թէ ինչպէս Շամիրամի պատերազմը Հնդկաստանում հաւաստաւ առաջ է եղել և յետոյ (եղել է) նորա մահը Հայաստանում: Ապա գրում է մեր պատմագիրը. «Ունիմ ի մտի և զԿեփաղիոնին, վասն ոչ տալ զմեզ բազմաց ծաղրել. զի ասէ ի բազմաց (Տպ. ի բանից) այլոց՝ նախ յազագս ծննդեանն Շամիրամայ, եւ ապա զպատերազմն Շամիրամայ ընդ Ջրադաշտի, եւ զյաղթելն ասէ Շամիրամայ, և ապա ուրեմն զպատերազմն Հնդկաց: Այլ հաւաստի մեզ թուեցաւ որ ի Մարիբաս Կատինայն է քննութիւն քաղդէական մատենից քան զայսոսիկ [այսինքն Կեփաղիոնի պտամածը Շամիրամի մասին]. քանզի ոճով իմն ասէ [Սար Աբաս] և զպատճառս պատերազմին [Ջրադաշտի հետ, որի հետևանքն եղել է Շամիրամի մահը Հայաստանում] յայտնէ. իսկ առ այսոքիւք և առասպելք աշխարհիս մերոյ զբազմահմուտ ասորին արդարացուցանեն. աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայ» և այլն:

Խորենացին Կեփաղիոնի մասին և նորա գրածը Շամիրամի համար առնում է, հաստաւ կարելի է ասել, Եւսեբիոսի քրոնիկոնից, թէպէտ և վերջինիս անունը չէ տալիս:³ Այստեղ իրօք որ առանց «ոճի» և առանց «պատճառները» յայտնելու բերած է Շամիրամի ծննունդն, նորա պատերազմը Ջրադաշտ մոգի

¹ Տես «ի բանսն՝ որ գնմանէ» խօսքի և «բանք» բառի բացատրութիւնը Բ. Գլ.

² № 1671 Ա. ձեռագիր. միւս Ա. ձեռագիրները «որպէս» բառը չունին. իսկ № 1665, 616 «մահուան» ձեռի փոխանակ ունին «մահ», որ ասելի ուղիղ է քերականօրէն: Ծարունակութիւնն ևս առնում ենք № 1671 ձեռագրից, որին համեմատ են միւս Ա. ձեռագիրները չնչին տարբերութիւններով: Տպագիրն աղաւաղուած է, չունենալով Շամիրամի պատերազմը Ջրադաշտի հետ և սորան յաղթելը:

³ «Կեփաղիոնի վիպագրի՝ վասն ասորեստանեաց թագաւորութեանն:» «Ապա ի նոյն յարեալ՝ ասէ [Կեփաղիոն] և զծնունդն Շամիրամայ. եւ զգարաւքստ մոց (ի) արքայի Բակտրացոց զպատերազմն և զպարտութեանն ի Շամիրամայ. և զանս թագաւորութեանն Նինայ անս ծր. և զվախման նորա: Յետ որոյ թագաւորեալ Շամիրամայ ած պարիսպ Բաբելոնի գայն ձեւ օրինակի, որպէս և բազմաց իսկ ասացեալ է, կտեսիայ և զենոնի և Էրոդոտայ, և այլոց՝ որ յետ նոցա: Ապա և զգօրածողովն շինեշ Շամիրամայ ի վերայ հնդկաց աշխարհին վիպագրե, և զպարտութիւն նորա և զփախուստ. և թէ զիա՛րդ ինքնին զիւր որդիսն կոտորեաց, և ինքն ի Նինայ որդւոյն իւրոյ սպանաւ:» Եւսեբի Կեսարացոյ Ժամանակակաւք, Վեներիկ 1818 եր. 90 համ.

հետ և յադթելը, ապա Շամիրամի պատերազմը Հնդկաստանում և փախչելը. նորա սպանելն իւր որդիներին և իւր սպանուելն Նինուասից: Մար Աբասի մէջ այս ամենը, թէպէտև Կեփաղիոնից տարբեր, բայց ոճով և պատճառաբանուած է պատմուած եղել (Ա. ժէ.), ուստի և Խորենացին, Հնդկաց հետ պատերազմը հաւաստի համարելով *սոսաջ* եղած է դնում, և մնացածն առնում է Մար Աբասից:

Այսպէս Խորենացին Շամիրամի պատմութիւնն առնում է Մար Աբասից: Բայց նա Մար Աբասի պատմածը Շամիրամի մահուան մասին հաստատելու համար յիշում է թէ Շամիրամի մասին առասպելներ եղել են հայոց մէջ: Դժբախտաբար նա շատ բան չէ բերում այդ առասպելներից, այլ բաւականանում է Շամիրամի մահուան կամ վերջի մասին միայն յիշելով, որովհետև խնդիրն այն է, որ հաստատէ թէ Շամիրամը Ջրադաշտի հետ պատերազմի մէջ Հայաստան է փախած և այստեղ սպանուած, ինչպէս դնում է Մար Աբաս, հակառակ Կեփաղիոնի, որ նորան Հնդկաց պատերազմի մէջ փախած է դնում և այդ պատերազմից յետոյ սպանուած: Այնուհետև ԺԶ. գլխի պատմութիւնը Խորենացին այնպիսի դարձուածներով է պատմում, որոնցից պարզ երևում է դարձեալ, որ իւր ժամանակ աւանդութիւն եղել է հայոց մէջ թէ Վանայ հնութիւններն ու «ամբարտակ գետոյն» վերագրուած են եղել Շամիրամին: Այս գլուխը Խորենացին, ինչպէս գիտենք, իւր լեզուով և իւր կողմից է պատմում, բայց ոճերի և դարձուածների համար օդտուում է դարձեալ Եւսեբիոսի Քրոնիկոնից: Մենք այդ մասին կանգ առնել չենք ուզում, գի խնդիրն այն չէ թէ Խորենացին ինչպիսի ոճաբանութիւն ունի. արդեօք նա իւր *սեպհական բառերով ու դարձուածներով* է նկարագրում որևէ բան, թէ այս կամ այն տեղից օգտուելով է անում իւր սեպհական նկարագիրը: Նկատենք միայն, որ այդ կողմից ոճի աղքատութիւնը յատուկ է Խորենացուն: Նա յաճախ միշտ նոյն ձևով ուրիշներից օգտուելով է նկարագրում, ինչպէս Յովհաննէս կաթողիկոսը, երբ նա նոյն իսկ իւր ժամանակի անձերն ու դէպքերը նկարագրելիս օգտուում է Խորենացու դարձուածներից: Բայց ոչ որ կարող չէ ասել թէ որովհետև Յովհաննէս կաթողիկոսն, օրինակ, Աշոտ թագաւորին և նորա «յարդարած կարգերը» Խորենացուց օդտուելով է նկարագրում, ուստի և նա սուտ է գրում և պատմութիւնը սարքում է: Դա ոճի առանձին յատկութիւն և աղքատութիւն է միայն: Այսպէս և Խորենացին Վանայ նկարագրի մէջ ինչքան էլ Եւսեբիոսից կամ ուրիշներից օգտուած լինի, նորա նկարագրի հիմքը մնում է իբրև իրողութիւն. դա Վանի և նորա հնութիւնների նկարագիրն է, և թէ այդ հնութիւնների շինողը Խորենացու ժամանակ համարուել է Շամիրամ: Բայց մենք դառնանք մեր խնդրին:

Իշտար, Շամիրամ, Աստղիկ (Անահիտ): — Երբ մի անգամ ըստ Խորենացու վկայութեան Շամիրամի մասին առասպել եղել է Հայոց մէջ, ըստ ինքեան անհաւանական չէ, որ մի ժողովրդական

գրոյց եղած լինի Շամիրամի և մի հայի, Արայի, յարաբերութեան համար: Թէպէտև Խորենացու աղբիւրը գրաւոր է, Մար Աբաս. բայց վերջինիս աղբիւրը կարող է ժողովրդական եղած լինել, ուստի և Շամիրամի և Արայի գրոյցը ժողովրդական ծագում ունենայ: Տեսնենք այդ գրոյցի բովանդակութիւնը, համեմատելով ուրիշ ազգերի մէջ եղած նոյն գրոյցի հետ: Բայց նախ Շամիրամի բնաւորութիւնը:

Շամիրամն ըստ հնոց դուստր է Ասորեստանցոց Միլիտտա դիւցուհու կամ ասորական Դերկետոյի: Նա նոյն բնաւորութիւնն ունի ինչ որ իւր մայրը, սեմական ազգերի սիրոյ դիւցուհին, Դերկետոյ կամ Աստարտէ (Atargatis), բաբելացոց և ասորեստանցոց Իշտարը:

Ասորեստանցոց մէջ այդ սիրոյ դիւցուհին մի հզօր հրամանատար, մարտիկ աստուածուհի է, պատերազմի դիւցուհին նետ-աղեղով զինուած, այրական ու պատերազմական բնաւորութեամբ, ճակատամարտի և որսի թագուհին: Բայց Իշտարը միանգամայն և փարթամ պտղաբերութեան, հեշտութեան և զգայական սիրոյ դիւցուհին է: Նա կապուած է Արուսեակ մոլորակի հետ և նորա սիմբոլն է գիշերավարը (Արուսեակն արևը մտնելուց յետոյ): Փիւնիկէում և Ասորիքում այս սիրոյ դիւցուհու նուիրական թռչունն էր աղանիւն: Նորա պաշտամունքը Բաբելացոց մէջ ցոփ և անառակ էր. նոյնպէս բուն զգայական և անբարոյական էր ասորական Աստարտէի, ըստ Կտեսիասի, Դերկետոյի պաշտամունքը: Նոյն բնաւորութիւնն ունի և փիւնիկական Աշտարտը որ պաշտուում էր կանաչ բլուրների և սրբազան անտառների մէջ:⁴ Շատ տեղեր հին ժամանակ եղել են Շամիրամի անունով բլուրներ: Այսպէս Ստրաբոնը գրում է Կապադովկիայի Դիանա քաղաքի համար. «Քաղաքն շինեալ է ի վերայ միոյ *ի սարահարթ քարծրաւանդակաց անտի, որ կոչին Շամիրամայ*:» (Ստր. ԺԲ. 2. 7): Պ. Գարագաշեանը բերելով այս հատուածն ակելացնում է. «Տիանայ, որպէս և գաւառն Տիանիտիս՝ կրօնէցունեն գԱնահիտ... և էր արդարև, ըստ նմին Ստրաբոնի, ոչ կարի հեռի ի Տիանայ, անուանի մեհեանն Անահիտայ Պերասիայ:» «Բայց քաղաք նուիրեալ բուն Անահիտայ էր Ձեղա, յորմէ ասէ Ստրաբոն թէ էր ի վերայ բարձրաւանդակի որ կրկոչուէր Շամիրամայ:» «Ձեղա, ասէ Ստրաբոն, ունի մեհեան անուանի նուիրեալ Անահիտայ, այն է դիցն զոր պաշտեն և Հայք:»⁵

Սեմական ազգերի սիրոյ աստուածուհու պաշտամունքը Կիպրոսից կղզիների վրայով անցած էր և Կիւթերա և Սիկիլիա, ուր փիւնիկեան Աշտարտի անբարոյական պաշտամունքը խառնուած և միացած էր յունական Ափրոդիտէի պաշտամունքի հետ: Այս դիւցուհին պաշտուում էր և Հայոց մէջ: Մեր Աստղիկը,

⁴Lehrbuch der Religionsgeschichte, herausg. von P. D. Chantepie de la Saussaye, Leipzig. 1897, 1. եր. 190 հմ. 197 հմ. 225 հմ.

⁵Գարագաշեան, Քնն. պատմ. Հայոց Բ. եր. 167 հմ.

որ համապատասխան են դնում Ափրոդիտին, համարում է ստորիներից փոխառություն: Նորա անունն իսկ՝ Աստղիկ, ըստ Հոֆմանի, թարգմանություն է ստորերեն Կաուկաբտա (kaukabta) բառի, որ նշանակում է աստղիկ, Արուսեակ (Venus) մոլորակը,⁶ մեր այժմեան ժողովրդական լոյս-աստղը: Սակայն ինչքան էլ Աստղիկը, որի պաշտամունքի մասին շատ տեղեկություն չունինք, սեմականների սիրոյ դիցուհին լինի՝ մտած հայոց մէջ, հաւաստի յայտնի է, որ հնումը մեր Անահտի պաշտամունքը նոյն է եղել, ինչ որ սեմական սիրոյ դիցուհունը: Անահիտը, թէպէտև իրանական ծագում ունի, կրել է սեմական ազդեցություն: Ստրաբոնը գրում է թէ պարսից բոլոր աստուածները պաշտում են հայերը, մանաւանդ Անահիտին, որին զանազան տեղերում և Եկեղիքում մեհեաններ են կանգնած, և թէ նորան այր և կին գերիներ են նուիրում. և այնուհետև անելացնում է. Մինչև ցայս վայր չիք տեղի զարմանալոյ. բայց դիցապաշառութիւն հայոց երթայ անգր ևս, զի սովորութիւն է առ նոսա արանց աւագաց ձօնել դիցն գոստերս իւրեանց կուսանս. այլ այսչէ ինչ արգել յետ տալոյ զանձինս ի պոռնկութիւն ի մեհեանսն Անահտայ զտանել արս որ ոչ խղճիցեն առնուլ դոսսա ի կնութիւն:⁷ Անահտի այս պաշտամունքը կատարելապէս նոյն է, ինչ որ սեմական սիրոյ աստուածուհունը: Հայոց մէջ այս անառակ պաշտամունքը գտնելը շատ բնական է, երբ ինկատի ունենանք, որ Հայերը հարաւից և արևմուտքից ոչ միայն սահմանակից են եղել սեմական ազգերին, այլ և Հայաստանի հարաւային և արևմտեան կողմերի բնակիչները սկզբնապէս եղել են ստորիք և յետոյ են հայացած: Այսպէս Անահտի մեհեաններ եղել են Եկեղիքում և Տարօնում, ուր, ըստ Ստրաբոնի, բնակիչներն առաջ եղել են ստորիներ: Տարօնի Աշտիշատում Անահտի հետ եղել է և Աստղիկի պաշտամունքը: Անահտի մի ուրիշ մեհեան եղել է Վանից հարաւ Անձևացեաց մէջ: Նոյն տեղերում Պաղատոյ լեռան գլխին նաև Աստղիկի պաշտամունքը:⁸ Վանայ մօտ Արտամետում ևս Աստղիկի պաշտամունքը յայտնի է Թոմա Արծրունուց (եր. 53 հտ.): Այնուհետև Վան քաղաքը, առաջին անգամ Խորենացու մէջ, կոչւում է քաղաք Ծամիրամայ. նոյնը յիշում է և Թոմա Արծրունին (եր. 63. 240. 252). բացի այդ սա յիշում է Ճուաշ գաւառում Ծամիրամ բերդ (եր. 258 հտ. 281), ամբոցն Ծամիրամ (եր. 270): Ծամիրամ գիւղ այժմ Նեմրութ սարի ստորոտում յիշում է Սարգիսեանը իւր տեղագրութեանց մէջ (եր. 272):

Ծամիրամի անունով այս տեղերի կոչումները հայոց մէջ

⁶Gelzer Zur arm. Götterlehre, եր. 123. 132.

⁷Գարագաշեան, Քնն. պատմ. Հայոց Ա. եր. 267 հտ. Gelzer, Zur arm. Götterl. եր. 113.

⁸Մ. Խորենացու մատենագրութիւնք. եր. 294, 301. «Տուեալ յայնմ տեղւոշե դեղս ախտականս առ ի կատարել զպղծութիւնս ախտից... առեալ ի չաստուածոցն ծրարս թարախածորս ի պատիր ախտիցն, որպէս գծրարսն Կիպրիանոսի առ ի պատիր Յուստինեայ կուսին» (եր. 294):

Խորենացու ազդեցութեամբ մտած համարելու համար ոչ մի հիմք չունինք: Նոյն իսկ պ. Խալաթեանն, ինչքան էլ Շամիրամի մասին առասպելները Խորենացու սարքածն է համարում, ստիպուած է ասելու, որ Խորենացին Շամիրամի գրոյցների համար ընդհանրապէ. «իբրև ելակէտ ունի (Исходить) Հայաստանի տեղադրական անունները, որոնք կապուած են Ասորեստանի աշխարհակալ թագուհու անուան հետ Ուրիշ խօսքով, Խորենացու ժամանակ եղել են Շամիրամի անունով տեղեր և Խորենացին այդ անուններից օգտուելով սարքել է Շամիրամի մասին գրոյցներ: Իսկ այդ տեղագրական անունները յիշուած են, գրում է պ. Խալաթեանը, «ըստ երևութին, միայն Ը.-Թ. դարից, այսինքն նոյն ժամանակից, երբ այդ միջոցին զօրացած Արծրունի իշխանների մէջ ձդտումն է առաջ գալիս Ս. Գրքի մի ակնարկութեան հիման վրայ՝ իրենց ցեղը հանել Ասորեստանի թագաւորներից:» Որքան հասկանում ենք պ. Խալաթեանին, նա ուղում է ասել, որ այդ տեղերի անունները Շամիրամի անուանը կապել են շատ ուշ ժամանակում Արծրունի իշխանները: Սակայն պ. Խալաթեանը այդ ասում է լոկ խօսքով: Բայց, ինչքան էլ Արծրունիք իրենց հանէին Ասորեստանի թագաւորներից, ոչ մի հիմունք չունինք թէ նոքա իրենց նախնի համարած Մենքերիմին, Սանասարին կամ Ադրամելիքին թողած՝ Շամիրամի անունով պիտի կոչէին իրենց Վանտոսալը: Եթէ Շամիրամի անունով տեղեր և բլուրներ եղել են հրնումը շատ շատ կողմերում և նոյն իսկ Կապադովկիայում և Պոնաոսում, և եթէ սեմականների այդ սիրոյ դիցուհին ի թիւս այլոց պաշտուել է և հայոց մէջ, կարող են ի հնուց անտի եղած լինել Շամիրամի անունով կոչուած տեղերը Հայաստանի յատկապէս այն կողմերում, որոնց բնակիչները ասորիներ են եղել և սեմականներին սահմանակից: Միւս կողմից եթէ ըստ Խորենացու Արծրունիք և Աղձնեաց բղէշխները իսկ ըստ Թոմա Արծրունու և Սասնոյ բնակիչները, իրենց սերած են համարում Ասորեստանցիներից, կարծում ենք, այդ ևս մի պատմական յիշողութիւն է միայն, քանի որ այդ կողմերի հայ բնակիչները ծագել են իրօք ասորիներից: Տեղական ժողովրդի մէջ եղել է այդ պատմական յիշողութիւնը, որ յետոյ կարող էր հեշտութեամբ կապուել Ս. Գրքի մէջ յիշուած Մենքերիմի որդոց հետ: Մենքերիմ և իւր որդիքը կարող են յետոյ Ս. Գրքից մտած լինել, բայց ոչ Ասորեստանցիների ծագման գրոյցը: Այդ գրոյցը հին պէտք է համարել, ինչպէս հին են նաև Շամիրամն ու իւր գրոյցները և ոչ սարքովի բան: Տեսնենք այդ գրոյցները:

Իշտարի ու Իզդուբարի եւ Շամիրամի ու Արայի առասպել լները: — Ասորեստանցոց Իշտարը, որ չամուսնացած աստուածուհի է, իւր տարփանքի համար հոմանիներ է որոնում. բայց նա հեշտասէր կողմի հետ ունի և մի սոսկալի մահաբեր կողմ, որով նա իւր սիրականին մահացնում է և ապա վշտից հետևում է նորան մինչև Սանդարամետի բանդը՝ իւր տարփածուին յարութիւն տալու համար: Իշտարի առասպելից յայտնի է

Իգդուբարի նշանաւոր վէպը:

Հրաշայի գեղեցիկ դիւցազն է Իգդուբար, որին սիրում է Իշտարը: Դիցուհին ինքն իրեն առաջարկում է գեղեցիկ Իգդուբարին, մեծ պարգևներ և իշխանութիւն խոստանալով նորան, որ իւր կամքը կատարէ. բայց Իգդուբարը մերժում է նորարոյր առաջարկութիւնները: Այդ ժամանակ Իշտարը զայրանում է և սպանում Իգդուբարին: — Այսպէս սպանում է նա իւր մի ուրիշ տարփածուին ևս Տամմուզին (tammuz), որի մահը ողբում է նա յետոյ և Սանդարամետ է իջնում նորան յարութիւն տալու համար:⁹

Ասորեստանցոցու Բաբելացոց մէջ այս առասպելի պաշտամունքն ևս կար իւր արարողութիւններով: Նոյնը կար և ասորոց մէջ Աթարի (Athar) և Ատտեսի (Attes) համար իսկ Փիւնիկեցոց մէջ Աշտարտի պաշտամունքի հետ միացած էր նորա սիրական Ադոնիսի պաշտամունքը. Տիրոսում նոյն իսկ Ադոնիսի յարութեան տօն էին կատարում:

Արդ ի՞նչ է մեր Շամիրամի և Արայի դրոյցը: Ինչպէս «այրասիրտն այն և կաթոան Շամիրամ» նոյն է, ինչ որ իւր մայրը սեմականների սիրոյ աստուածուհին, մարտիկ և տարփագին դիցուհին Իշտար — Աստարտէ — Ատարդատիս կամ Դերկետոյ, նոյնպէս և մեր Շամիրամի և Արայի գրոյցը նոյն է, ինչ որ Իշտարի և Իգդուբարի այս վէպը: Համեմատութիւնը շատ պարզ է: Մեր Արան նոյնպէս գեղեցիկ է, ինչպէս Իգդուբար, Ադոնիս և ուրիշները: Ինչպէս Իշտարն Իգդուբարին, նոյնպէս և Շամիրամն Արային իշխանութեան խոստումներ է անում իւր կամքը կատարելու համար: Բայց Արան հաւանութիւն չէ տալիս, ինչպէս և Իգդուբարը: Իշտարը զայրանում և մահացնում է Իգդուբարին. այսպէս և Շամիրամ տիկինն «ի սաստիկ ցասման լեալ» գալիս կռուում է Արայի դէմ. և Արան մեռնում է այդ սիրոյ պատճառով: Այնուհետև մեծ մայր Իշտարը սաստիկ ցաւում է և Սանդարամետ է իջնում իւր տարփածուին յարութիւն տալու համար: Նոյն յարութեան միջադէպը կայ և մեր առասպելի մէջ, միայն մեր հեթանոս հայերի հաւատալիքով պատմուած, և այս շատ բնական է: Խորենացու և Անանունի մէջ այդ յարութիւնը քրիստոնէական հայեացքով փոփոխութեան է ենթարկուած, որ նոյնպէս շատ բնական է:

Առլեզք եւ Արայի յարութիւնը: — Յայտնի է, որ մեր հեթանոս հայերն ունեցել են, ըստ Եզնիկի «ի շանէ ելեալ» Արալեզք կամ Առլեզք կոչուած ոգիներ, «աներևոյթ գօրութիւնք», որ պատերազմի մէջ ընկած վիրաւոր քաջերին կամ դիւցազներին յիգում և ողջացնում են: Այդ հաւատալիքը ինչպէս երևում է, շատ հին պիտի լինի, քանի որ Պլատոնի հասարակապետութեան մէջ բերուած էր հայի յարութիւն առնելը, թէպէտ և առանց

⁹Lehrbuch der Religionsgeschichte, herausg. von P. D. Chantepie de la Saussaye, Leipzig, 1897. 1. եր. 192, 216.

Արայեզներին, մեր այդ հաւատքի հետ նոյն ընդհանուր գծերն ունի: Այստեղ ևս Էրը քաջասիրա է և սպանում է պատերազմի մէջ: Տասն օրից յետոյ, մինչ ուրիշների դիակները նեխած էին, Էրինը անխախտ և ամբողջ են գտնում: Բերում են տում, և տասներկուերորդ օրը, երբ խարոյկի վրայ Էր բարձրացած, կենդանանում է Էրը: Էմինն առաջին անգամ այս առասպելը համեմատութեան բերելով Արա գեղեցկի առասպելի հետ, աւելացնում է թէ Պլատոնի առասպելի իմաստը, «*քաջք անկեայք ի պատերազմի*» յառնեն, ոչ այլ ինչ է, բայց եթէ բուն հեթանոսական վարդապետութիւնն նախնի Հայոց: Եւ նա աշխատում է Էր հայը նոյնացնել Արա Հայկադնի հետ:¹⁰ Այս հաւատն այնքան զօրեղ է եղել, որ նոյն իսկ քրիստոնէութեան ժամանակ Դ. դարում, ըստ Փաւստոս Բիւզանդի (Ե. դար. լգ. գլ.), չնայելով որ Մուշեղ Մամիկոնեանի գլուխը մարմնից կտրուած էր, բայց «ոչ հաւատային ընտանիք նորա մահուն նորա... իսկ կէսը յառնելոյ ակն ունէին նմա:» Այս պատճառով գլուխը կպցնում են մարմնին և դնում մի աշտարակի տանիքում, կարծելով թէ «վասն զի այր քաջ էր, Աղլեղը իջանեն և յարուցանեն գոա:»

Այսպէս պատերազմի դաշտում իբրև քաջ ընկնում է և Արան. «գտանեն գԱրայն մեռեալ ի մէջ *քաջամարտկացն, եւ հրամայէ ղընել զնա ի վերնատանն ապարանից*: Իսկ ի գրգռել միսսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ՝ քինախնգիր լինել մահուան Արայի, ասէ. *հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվերս նորա եւ վենդանասցի*:» Եւ Շամիրամն իրօք սպասում է, որ Արան պիտի կենդանանայ. «*Միանգամայն եւ ակն ունէր ղիւթութեամբ վրիկութեան իւրոյ վենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տոփական ցանկութենէն*:» Քրիստոնէայ մատենագիրը, որ այդպիսի աստուածների գորութեան չէր հաւատում, Շամիրամի ձգտումն՝ աստուածների ձեռով Արային կենդանացնելու բացատրում է «*դիւթութեամբ վիկութեան*:» Միւս կողմից նա չէր կարող երբէք հաւատալ, որ աստուածները կամ Շամիրամ իւր կախարդութեամբ կենդանացրած լինին Արային. ուստի և պիտի գրէր թէ «Նեխեցաւ ղի նորա, հրամայեաց ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել:» Այստեղ եթէ վերջացնէր, առասպելը թերի կըմնար, զի հայերը գրգռուած էին և նոքա հանդարտում են, երբ իմանում են, որ Արան յարութիւն է առել. «Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց. և հաւանեցուցեալ զամենեսեան դադարեցուցանէ զխազմն:» Ուստի և Արայի յարութիւնն առնելու պատմութիւնը պէտք էր պահել, միայն մի ձևով բացատրած: Եւ նա բացատրած է շատ պարզ կերպով. «*Ձմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ, համբաւէ զնմանէ այսպէս. լիզեալ աստուածոցն զԱրա և կենդանացուցեալ լցին զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մենջ և փառաւորեայք,*

¹⁰Վեպք Հնոյն Հայաստ. եր. 146 հտմ.

իրբն հեշտացուցիչք և կամակատարք:» Դարձեալ քրիստոնեայ մատենագրի համար մի յարմար առիթ էր այդ առասպելի մէջ բացատրելու նաև Առլեզների պաշտամունքի խարեական ծագումը. «Կանդնէ և նոր իմն պատկեր յանուն դիւաց, և մեծապէս դոհիւք պատուէ. ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրա:» Այս գրութեան մութն է. «նոր իմն պատկեր» բառը կարելի է հասկանալ, թէ Շամիրամը նոր աստուածութիւն չէ հաստատում, այլ եղած աստուածների համար «մի նոր պատկեր, արձան» է կանգնում: Բայց կարելի է և այնպէս հասկանալ թէ նա նոր աստուածութիւն, Առլեզների պաշտամունքն է հաստատում: Այն ժամանակ այդ հակասում է նոյն իսկ առասպելի էութեանը, քանի որ հայոց մէջ այդ հաւատքի գոյութիւն ունենալն արդէն ենթադրուում է, որ հայերը հաւատում են թէ Արան կարող է յարութիւն առնել և յարութիւն է առել: Հակասութիւնն իսկ ցոյց է տալիս, որ քրիստոնեայ մատենագրի կողմից է աւելացրած այդ: Այդ հատուածն Անանունի մէջ (Մէրէոս, եր. 6.) դստնունքն այսպէս. «Եւ այնպէս հանէ համբաւ Արալեզաց տիկինն Շամիրամ,» որ դարձեալ մութն է:

Ինչպէս էլ լինի, այդ գծերը պարզ կերպով քրիստոնեայ հեղինակից են մտած հին առասպելի մէջ, որ քրիստոնեական ձևով և հայեացքով է պատմուած: «Եթէ այդ և հեմերական յաւելումները դէն դնենք, դրում է պ. Գեյցերն այս առասպելի համար, կըմնայ միայն ասորական սիրոյ աստուածուհու և իւր տարփածուի առասպելը: Շամիրամի գրոյցի մէջ պահուած է Աստղիկի առասպելը,» աւելացնում է նա:¹¹

Թէ Արան ժողովրդական գրոյցով յարութիւն է առել, այդ աեսնում ենք և Թոմա Արծրունու մէջ: Այստեղ (եր. 215) գտնում ենք մի այսպիսի աղճատուած կտոր: «Եւ դաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանառսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յերիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզուոյ գեաւոջն, որ զօրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանեցոցն ի մանկանցն Շամիրամայ:» Վերջին ընդգծած մասը աղաւագուած է: Այսքանը միայն հասկացում է աղճատուած ձևից թէ Շամիրամի մանուկներից ըսպանուածների վերքերի սպիանալու մի առասպել է դա: Բայց բնագիրը վերականգնելը շատ հեշտ է: Աղճատումը միայն տառերի՝ յ, ց, ե, ի ևլն մէջ է: Պատկանեանն արդէն սկզբի երեք բառի համար իբրև ծանօթութիւն դրնում է. «թերևս՝ ուր զԱրայն գեղեցիկ: (տես. նոր. Բուգ. յէջն 20): Այնուհետև «սպիանած» բառը շատ պարզաբար կամ աշխարհաբար ձևով «սպիացած,» կամ աւելի «սպիանալ» պէտք է կարդալ: Անհասկանալի «վերայն» բառը «վիրացն» է, քանի որ վերքերը պէտք է սպիանան: Այսպէս բնագիրը կըստանանք. «Ուր զԱրայն

¹¹ Zur armen. Götterlehre. եր. 132:

գեղեցիկ առասպելաբանեն՝ ըսպիանալ վիրացն սպանելոյն ի մանկանցն Շամիրամայ:» Մենք սպանելոցն, բառն ևս եզակի «սպանելոյն» դարձրինք (Հմմտ. Խորենացի. Ա. Ժե. մեռանի Արայ ի պատերազմին ի մանկանցն Շամիրամայ). մի անգամ որ «գարայն» դարձած է «գաւրացն», ետևից պետի բերել և «սպանելոցն» յոգնակի թիւր: Թովմայի այս կտորից իմանում ենք, թէ առասպելաբանում են, որ Շամիրամի մանուկներից սպանուած Արայ գեղեցիկի վերքերը սպիանում են, ուստի և Արան կենդանանում է, Լեզուոյ գիւղում:

Նոյն գրոյցը գտնում ենք և այսօր: Ներսէս Սարգիսեանն իւր Տեղագրութեանց մէջ գրում է նոյն գիւղի մասին. «Ձորմէ ասի յոմանց տեղի լինել անկմանն Արայի ի Շամիրամայ, որոյ զոմն ի համանեացն զԱրայ կարծեցուցեալ՝ յուր եհան եթէ դին լիզեալ ողջացուցեալ են. և յայնմանէ, ասեն, մնաց անուն գեղջն Լեզք:»¹² Ինչքան էլ Սարգիսեանը ժողովրդից է առնում, ինչպէս պարզ երևում է «ասի յոմանց», «ասեն» բառերից, բայց նա ժողովրդականը հաւատարմութեամբ արձանագրել է կարողանում ընդ դժած տողերի մէջ: Նա ենթարկւում է Խորենացուն:¹³ Աւելի հաւատարմութեամբ գրի է առնում նոյն գրոյցը Սրուանձաեանը Գրոց Բրոցի մէջ (եր. 52): Լեզքը իւր անունով և հին պատմութեամբ յայտնի է. ուր Շամիրամի աստուածները մեր Արայ գեղեցիկին մեռած մարմինը լզեր ու կենդանացուցեր են եղեր. և Արայլեզք անունով կոչուք ու աստուած շինեցին պաշտեցին այն ժամանակ հայեր այս գեղի բարձր գագաթին վրայ, ուր այժմ Ամենափրկչի մատուռն է:¹⁴

Այս պատմութեան Էութիւնը, Լեզք գիւղի հետ կապուած այս առասպելը, թէ Շամիրամի մանուկներից սպանուած Արայի վերքերն այդտեղ են սպիանում, Խորենացուց չէ ծագում ոչ Արծրունու և ոչ միւսների մէջ, գի ըստ Խորենացու նախ՝ Արան յարութիւն չէ առնում և ապա նա սպանւում է Արայի դաշտումն, Այրարատում, և այնտեղ էլ Շամիրամը հրամայում է աստուածներին լիզել նորա վերքերը: Եւ երբ նա հաւատացնում է հայերին թէ Արան յարութիւն է առել, նոր գալիս է Վանայ կողմերը (Ա. Ժգ.):

Ասել թէ Արծրունին և Սրուանձաեանն իրենցից ստեղծում

¹²Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ. 1864. եր 264.

¹³Հմմտ. Խորենացի Ա. Ժե. «Չմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ... համբաւե զմանեայսպես, շիզեալ աստուածոցն զԱրայ եւ կենդանացուցեալ:» Հմմտ. Անանուն (Մեքեոս եր. 5) «Չարդարե զմի ոմն ի հոմանեաց իւրոց այր պատշաճող, եւ համբաւ նանե զԱրայի շիզուլ աստուածոցն եւ յարուցանել:»

¹⁴Թէ ումից եւ առնում Սրուանձաեանն այս գրոյցը՝ յայտնի չէ. երեւարդի ժողովրդական գրոյցները չեն աղբիւրը այն ժամանակ կարող երնք ենթադրել թէ նա Թ. Արծրունուց եւ առնում եւ թէ նորա մեռին եղեշն մի մեռացի, որի մէջ Արայի վերքերի սպիանալու կտորն աղճատուած չէ եղել: Դժուար է ենթադրել, որ Սրուանձաեանը կը վերականգնէր այդ աղճատուած կտորը: Սրուանձաեանի դիրքը տառն երեք տարի կաղ եւ նրատարակուած քան Պատկանեանի՝ Թովմայի հրատարակութիւնը:

են այդ գրոյցը, ելակէտ ունենալով միայն Լեզք անունը, այդ հեշտ պրծնելու մի միջոց է միայն: Եւ այդ հեշտ ու պատրաստ, միջոցն է բանեցնում պ. Խալաթեանը խեղճ Թովմա Արծրունու վերաբերմամբ ևս: Սորա պատմածները «Շամիրամի և Արայի, ինչպէս և մի քանի հայ նախարարների և թագաւորների մասին, ինչպէս են Հայկ, Տիգրան Ա., Վահագն, Երուանդ, Արտաշէս Բ. և ուրիշները, բնաւ պէտք չէ համարել, ինչպէս կարող է երևալ, Խորենացու բերած վիպական հատուածների վարիանտներ, և այս հիման վրայ այս վերջիններիս իսկութեան հոմար ապացոյցներ կազմել: Միանգամ ընդ միշտ պէտք է իմանալ, յարում է կարուկ կերպով պ. Խալաթեանը, որ Թովմա իւր պատմութեան հին մասը գրելիս *սովորաբար* (այո՛, բայց միայն սովորաբար) կրկնում է Խորենացու ասածը, կամ թէ *մշակում է նորա գրածը ոչ առանց ֆանտաստիկական յաւելումների*, որոնց նպատակն է մեծացնել Արծրունիներին:» Եւ այդ ամենն այնքան ակնյայտնի է, աւելացնում է պ. Խալաթեանը, որ նոյն իսկ Ժամանակի կորուստ է» այդ քննելը:¹⁵ — Եւ այսպէս վերջացաւ. «սովորաբար» Խորենացի և «ֆանտաստիկական յաւելումներ» և «Ժամանակի կորուստ» այդ քննելը: Թ. Արծրունին էլ գրտաւ իւր դատավճիռն ու գնահատութիւնը: Խորենացու մեղքը միշտ այն է, որ նա շատ բան պատմում է, որ իրենից առաջ ուրիշները չեն պատմել: Իսկ Թովմա Արծրունու մեղքն էլ այն է, որ նա Խորենացուց յետոյ է ապրել և Խորենացուց օդաուել է, թելէտ և կան բաներ, որ նորանից տարբեր է պատմում, ինչպէս այս Լեզունոյ գիւղի գրոյցը: Այդ գէպքում նա «ֆանտաստիկական յաւելումներ» է անում:

Բայց Թովմա Արծրունին, օրինակ, Տիգրանի և Արտաշէսի պատմութիւնն անելիս իբրև աղբիւր դնում է յոգնակի թուով. «Որպէս ցուցանեն *առաջինքն ի պատմագրաց* (եր. 36), «Որպէ բացայայտեն *գիրք պատմագրացն* (եր. 52): Այդ սուտ է դրում նա. միայն մի աղբիւր ունի, Խորենացի. մնացածը ֆանտաստիկական յաւելումներ են: Ուրիշ տեղ (եր. 44) նա գրում է. «Իսկ առ մեզ հասին գրոյցքս այս ըստ մնացորդաց *պատմագրացն առաջնոց*, ի Մամբրէ վերծանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէոդորոս Քերթող...:» Այստեղ էլ նա սուտ է գրում: Կամ երբ Հայկի և Բէլի պատերազմի մասին գրելիս աւելացնում է. «Ջոր (գԲԷ) *ոմանք ի պատմագրաց* ասեն փախստեամբ դարձեալ գնաց յԱսորեստան» (եր. 24), — այստեղ էլ նա «ֆանտաստիկական յաւելում» է անում, որովհետև Խորենացին այսպիսի բան չէ յիշում: Կամ երբ Թովմա Արծրունու մէջ Հայկը Բէլին ասում է, «Շուն դու, և երամակ շանց՝ որ գկնի քո տողեալ սահին,» այստեղ էլ «ֆանտաստիկական» յաւելում է անում, զի այդ չկայ Խորենացու մէջ... Բայց չէ՛, այդ «ֆանտագիա» չէ, զի բարեբախտաբար մնացել է Անանումը (Սերէոս, եր. 4),

¹⁵Халат. Арм. Эпосъ. եր. 151.

որի մէջ կայ «Շուն ես դու և յերամակէ շանց՝ դու և ժողովուրդ քո:» — Այդպէս հեշտ կերպով կարելի չէ պրծնել մի պատմագրի համար, որ աղբիւրներ է յիշում, և որ ինքն իւր համար ասում է թէ ձեռնարկելով գրել «Որ ինչ իսկզբանց անտի շինութեանց աշխարհիս Հայոց ի Հայկայ աղեղնաւորէ և ի նորուն զարմից և ցկաթոտ և վավաշոտ Շամիրամն տիկին Ասորեստանեայց *եւ ի նմանէ յայլս եւ յայլոց եւս յաւետ ձեռակերտք եւ շինուածք յիւրաքանչիւրոցն յերկրիս մերում եղեն՝ մեր առ ամենայնն անձամբ հասեալ եւ աչօք տեսեալ...*» (եր. 293): Թոմա Արծրունին Խորենացուց, անշուշտ, խիստ շատ է օգտուում. բայց նա ունի և ուրիշ գրաւոր աղբիւրներ: Խնդիրը, հարկաւ, այն չէ, որ Թոմա Արծրունին ևս կարող է այս կամ այն բանն իրենից յարմարեցրած լինել, բայց ամեն ինչ, որով նա տարբերւում է Խորենացուց, նորա յարմարեցրածը համարել կարելի չէ: Այդպիսի յերկրումները կամաց կամաց և բազմաթիւ մարդոց ձեռով են պատրաստուում: Եւ երբ մենք ոչ մի փաստ չունինք այս կամ այն պատմութեան համար թէ Արծրունու իրեն սարքածն է, չենք էլ կարող նորա «Փանտաստիկական յաւելումը» համարել: Այսպէս և երբ նա պատմում է թէ առասպելաբանում են, որ Շամիրամի մանուկներից սպանուած Արայ գեղեցկի վերքերն ըսպիացած են Լեզուոյ գիւղում, — մենք իրաւունք չունինք ասելու թէ նորա աղբիւրը Խորենացին և իւր «Փանտագիան» են: Նորա աղբիւրն այդտեղ ժողովրդական գրոյցն է: Մենք այդ կրտսնենք ներքևում ևս: Այստեղ ասելորդ չի լինիլ մի երկու խօսքով կանգ առնենք պ. Խալաթեանի մի ուրիշ կարծիքի մասին ևս:

«Արայի գրոյցն արուեստական կերպով շինուած է *մի ամբողջ շարք գրաւոր յիշատակարանների վրայ*,» գրում է պ. Խալաթեանը (եր. 145): Եւ այդ «գրաւոր յիշատակարաններն» են, Դիողոր Միկիլիացի, Աստուածաշունչ, Եզնիկ, Փաւստոս, Կղեմէս Աղեքսանդրացի: Թէ Խորենացին կամ իւր աղբիւրը՝ Մար Աբաս Շամիրամի պատմութեան համար կարող էր օգտուել այս կամ այն գրաւոր յիշատակարաններից և օգտուած էլ է, այդ մի կողմն ենք թողնում: Բայց շատ զարմանալի է, որ այդ գրոյցը «սարքողը», ըստ պ. Խալաթեանի, մի կտոր Դիողոր Միկիլիացուց է առել, մի կտոր Աստուածաշնչից, մի կտոր Եզնիկից, մի կտոր Փաւստոսից, մի ուրիշ կտոր էլ Կղեմէս Աղեքսանդրացուց, մի բառ էլ «Արա» (= գեղեցիկ) պարսկերէնից է առել, մնացածն էլ «իւր հարուստ երևակայութեամբ» լրացրել է, և կամ «բիրլիական — քրիստոնէական հայեացքներով» առաջնորդուած՝ Յովսէփ գեղեցկի պատմութեան ձևով «ողջախոհութեան զգացմունքից» Արային մերժել է տուել վաւաշ Շամիրամի սերը¹⁶ (մի ողջախոհութիւն, որ հայերն անպատճառ բիրլիական քրիստոնէականից պիտի սովորէին), — և ահա դուրս է եկել մեր Շամիրամի և Արայ գեղեցկի առասպելը պատահաբար

¹⁶А Халат. Арм. Эпосъ. եր. 143 հուն.

ճիշտ նոյնը, ինչ որ Շամիրամ — Իշտարի և իւր գեղեցիկ ու ողջախոհ սիրական Իգդուբարի առասպելն է, մի առասպել, որ սեպագրութեանց մէջ կարդացուած է: Պ. Խալաթեանի ճանապարհը շատ երկար ու պատահականութեամբ լի է: Կարծում ենք կարճ ու բնական ճանապարհն այն է, որ ասենք թէ քանի որ սեմականների սիրոյ վաւաշ, բուռն զգայական դիցուհու պաշտամունքը մտած էր մեր մէջ, ուստի և այդ առասպելն ևս, որ նոյն դիցուհու առասպելն է, կարող էր դիցուհու պաշտամունքի հետ մտնել հայոց մէջ: Այս կասէր անշուշտ պ. Խալաթեանն, եթէ այդ առասպելն ամենից առաջ յիշուած լինէր ուրիշ ամեն մի մատենագրի, օրինակ՝ Փաւստոսի, Եզնիկի մէջ, բացի Խորենացուց: Եւ Խորենացին մեղաւոր է, հարկաւ, որ ինքն է ամենից առաջ յիշում այդ: Բայց մենք դառնանք Վանայ Լեզք կամ, ըստ Թումայի, Լեզուոյ գիւղին:

Լեզքի եւ Արտամետի գրոյցները: — Արուանձտեանը վերևում յիշուած գրքի մէջ ասում է թէ Լեզք գիւղի բարձր գագա թի վրայ, ուր այժմ Ամենափրկչի մատուռն է, «*քելեռագրով քարեր լեցուն են. և ձուլածոյ հին պղնձէ կենդանեաց փոքր արձաններ գրանուեցան մեր օրերը դեռ ևս քանի մի տարի առաջ:*» Այս նկարագիրը ցոյց է տալիս, որ Լեզքը շատ հին ժամանակ արդէն, Արծրունուց և Խորենացուց շատ առաջ մի դեր է խաղացել: Դա հաւանօրէն եղել է կրօնական պաշտամունքի տեղ, որի հետքերը մինչև այժմ մնում են. «*Այս Լեզք գիւղի մօտերը կայ մի թոնիրի ձևով աղբիւրի փոսակ կամ ջրհոր, որ Սուրբ թոնիր կրկնէն, ուր յաճախ գնացողներ կան, շատերուն իբրև ուխտատեղի:*» Հեթանոսական պաշտամունքի մնացորդը լինելը շատ պարզ է: Բայց ի՞նչ պաշտամունքի մնացորդ է այդ: Շամիրամի — Իշտարի — Աստղիկ: Այս բացատրում է մեզ «Սուրբ թոնիրի» հետ կապուած առասպելը, որ բերում է Արուանձտեանը: «*Մի միայն մէկ ձուկ կերևի այդ ջուրին մէջ. և որին որ երեւի, անոր բախտն ու ուխտը կը կատարուի:* Դա կնկան կերպարանք ունի եղեր. և արծաթէ օղն ալ իւր քիթն անցուցած՝ կըտեսնուի տակաւին: *Երեցկին* է եղեր դա. *կին կարի գեղեցիկ*. երբ նստած թոնրի շուրթն հաց կըթխէ, աղքատ մը կուգայ հաց կ'ուզէ, կուտայ: Կերակուր կուզէ, կուտայ: Գինի կ'ուզէ, կուտայ: Թշուառականը կըհամարձակի *պագ* մի ուզելու, երեցկինը կըվարանի, բայց... *պագն ալ կուտայ:* Եւ յանկարծ նոյն վայրկենին երեցը ներս կըմտնէ. երեցկինը ամօթէն ու ահէն ինքզինքն կըձգէ ի թոնիր կրակին մէջ... կրակն ջուր դառնալով, ինքն ալ ձուկ, Աստուծոյ հրամանով յաւիտենական յիշատակ կըմնայ նոյն տեղ:»¹⁷

Այս գրոյցն ինքը պ. Խալաթեանը համարում է, նոյն իսկ իւր «Հայոց վէպի» մէջ, Շամիրամի առասպելի շրջանին պատկանող մի պատմութեամբ, որ «*թերեւս ի հնուց անտի Հայաստան է մտած*

¹⁷Արուանձտեան, Գրոց Բրոց, եր. 53. Այս առասպելի վարիանտը, ոչ տեղի հետ չկապուած, Տ. Նաւասարդեանի Հայ ժող. հեքեաքներում, Է. գիրք. եր. 39.

Ասորիքից և ժամանակի ընթացքում կորցրել է իւր արտաքին, հեթանոսական պարական, բայց ոչ ֆաբուլան: Այս գրոյցի հնագայն ձևը բերած է Դիոդոր Սիկիլիացին. Դա Դերկետոյ դիցուհու գրոյցն է, որ իւր դուստր Շամիրամի ծնունելուց յետոյ ձուկ է դառնում յանցաւոր սիրոյ համար:¹⁸ Պ. Խալաթեանն այս մասին խօսած է իւր մի ուրիշ աշխատութեան մէջ,¹⁹ որ ցաւ է ձեռի տակ չունինք: Մենք չենք յիշում թէ այս տեղ նա ինչպէս է հաստատում իւր այդ կարծիքը, բայց մենք այդ ճիշտ ենք համարում:

Շամիրամի մայրը Դերկետոն (Atargatis) ջրի աստուածուհի է: Նորա սրբազան կենդանիքն են Փիւնիկիայում և Ասորիքում աղանիւն և ձուկը: Ասկադոնում, ուր նորա պատկերը ձկան մարմնով էր հանած, նորա տաճարը շինուած էր ձկնահարուստ մի լճի մօտ: Նորա տօնի օրերը ջուր էին բերում նորա տաճարը և սրսկում: Այս ամենը յիշեցնում է մեր Վարդավառին, որ Անահտի կամ Աստղկի տօնն է համարում, ջուր սրսկելը և աղանի բաց թողնելը, մի սովորութիւն, որից երևում է, որ մեզնում ևս այդ աստուածուհուն նուիրական եղած են աղանիւն և ջուրը: Պ. Խալաթեանը կարծում է թէ Լէզքի այդ առասպելը կորցրել է իւր հեթանոսական պարագան: Բայց այդ ճիշտ չէ: Սուրբ թոնրի, *ջրի ու ձկան* պաշտամունքն իսկապէս հեթանոսական է և ոչինչ չունի քրիստոնէութեան հետ:²⁰ Այս պաշտամունքը հարկաւ նոր չէ և գալիս է շատ հին հեթանոսական ժամանակներից. նոր չէ և այդ Սուրբ թոնրի հետ կապուած առասպելը, որ սիրոյ աստուածուհու այս պաշտամունքի հետ ի հնուցանտի մտած պիտի լինի Հայոց մէջ, իսկապէս ոչ թէ մտած, այլ հայացած ասորիները պահած են այդ կաղմերում:

Ի՞նչ է եզրակացութիւնը: Այսօր Վանայ նոյն Լէզք գիւղի մօտ, ուր ըստ Արծրունու սպիանում են Շամիրամի մանուկներից սպանուած Արայի վերքերը, գտնում ենք սեմականների սիրոյ դիցուհու և հեթանոսական պաշտամունքը. և որ գլխաւորն է, այդ պաշտամունքի տեղի հետ կապուած է, թէպէտ և առանց Շամիրամ անուան, մի գրոյց, որ քրննութիւնը ցոյց է տալիս թէ նոյն սիրոյ աստուածուհունն է: Այսօրուայ այդ գրոյցն ու պաշտամունքը չկան Խորենացու և Արծրունու մէջ և չեն էլ կարող սոցանից անցած լինել ժողովրդին: Դա հնութեան մնացորդ է: Եւ երբ այսօր Խորենացուց անկախ գտնում ենք սեմական սիրոյ աստուածուհու պաշտամունքն ու առասպելը Վանայ մօտ Լէզք գիւղում, միթէ դա ապացոյց չէ, որ այդ տեղը հնումը նուիրական է եղել Շամիրամին: Եւ միթէ այսօրուայ այդ պաշտամունքն ու գրոյցը, որ շինծու չեն, չե՞ն վկայում, որ նոյն տեղում կամ Վանայ

¹⁸Халат. Арм. Эпосъ., էր. 150.

¹⁹Очеркъ народн. арм. сказокъ, Москва, 1885.

²⁰Թոնիրն ու թոնրում այրուելը բոլորովին ուրիշ մոտիւ ե, որ եկել կապուել ե սեմական սիրոյ դիցուհու այս առասպելին: «Սուրբ թոնիրը» գուցե հեթանոսական օջախի պաշտամունքի մնացորդ լինի: Հմմտ. Գղ. Ե. Հայկի առասպելը.

մօտիկ ուրիշ անդերում արդարև եղել են Ճամիրամի վերաբերեալ ուրիշ գրոյցներ ևս: Եւ եղել են այդ գրոյցները ու կան ցայժմ, որոնցից մէկն է Արծրունու գրածը, այսինքն Արայ գեղեցկի սպանուելը Ճամիրամի մանուկներից և նորա յարութիւն առնելը. մի ուրիշն է *Ճամիրամի* մահուան մասին Խորենացու պատմածը. մի երրորդն է արդի գրոյցը Ճամիրամի մասին, որ բերում է Ն. Սարգսեանն իւր Տեղագրութեանց մէջ:

Լեզք գիւղի հետ կապուած այսօրուայ այդ մի գրոյցը միայն, որ Խորենացուց անկախ գոյութիւն ունի, ցոյց է տալիս որ մենք իրաւունք չունինք Ճամիրամի մասին պատմուած արդի միւս գրոյցը «Խորենացու ազդեցութեամբ կազմուած մի նորագոյն գրոյց» համարելու, ինչպէս կարծում է պ. Խալաթեանը (եր. 149): Նորա պատճառաբանութիւններից գլխաւորն այն է, թէ «գործողութեան տեղը միևնոյն է, Վանայ լճի շրջակայքը:» Սակայն այդ կարող չէ հաստատել թէ այսօրուայ Ճամիրամի մասին գրոյցները Խորենացուց են անցած ժողովրդին: Չէ՞ որ Լեզք գիւղի այդ Սուրբ թոնրի առասպելի համար ևս գործողութեան նոյն տեղն է. բայց այդ առասպելը Խորենացուց չէ մտած ժողովրդի մէջ: Գործողութեան տեղի նոյն լինելը կարող է մինչև իսկ պ. Խալաթեանի կարծիքի հակառակը հաստատել: Եթէ մի հին գրոյց յարատւում է ժողովրդի մէջ, ասել չի ուզիլ ամենից ատելի այնտեղ պիտի յարատւի, ուր առասպելը կապուած է որոշ տեղի հետ: Եթէ հնումը Ճամիրամի գրոյցները Վանայ մօտերն են այս կամ այն տեղի հետ կապուած, շատ բնականօրէն մենք այսօր ևս նորա առասպելներն ատելի շուտ նոյն տեղերում կրգտնենք քան որևէ ուրիշ տեղում:

Խորենացին չէ ասում թէ Ճամիրամի մահն իւր իմացած գրոյցով յատկապէս ո՛ր տեղի հետ է կապուած: Նա միայն ընդհանուր ձևով գրում է. «Աստ ուրեմն գմահն ասել Ճամիրամայ:» Ենթադրաբար իմանում ենք Վանայ կողմերը: Իսկ արդի գրոյցը որոշ կերպով ցոյց է տալիս այդ տեղը. Ճամիրամի վերջը կապուած է Արտամետի հետ: Եւ այս իւր առանձին նշանակութիւնն է ստանում, երբ գիտենք, որ ըստ Թոմա Արծրունու (եր. 53 հտ.) նոյն տեղում եղել է Աստղկի պաշտամունքը:

Այնուհետև պ. Խալաթեանի երկրորդ պատճառաբանութիւնն է թէ Սարգսեանի բերած արդի գրոյցի մէջ ևս «վիուկ և հեշտասեր» է դուրս գալի Ճամիրամ ինչպէս Խորենացու մէջ: Սխալւում է պ. Խալաթեանն ասելով թէ այդ գծերը «Խորենացու իրատեսակ պատկերացումն են Ճամիրամի մասին» (своеобразное представление): Ճամիրամի հեշտասիրութիւնն ու տոփանքը, հոմանիներ որոնելը գիտենք, Խորենացու ստեղծածը չէ: Իսկ ինչ որ վերաբերում է Ճամիրամի վիուկ լինելուն Խորենացու մէջ, իսկապէս նորա յուռութեան ինչպէս և ու լուսնները ծովը ձգուելուն, նոյն իսկ պ. Խալաթեանը կարծում է թէ այդ կարող է լինել «Խորենացու ժամանակների յետնագոյն (?)

գրոյցների արձագանգներ» (եր. 148 հտ.):²¹ Եւ երբ մի անգամ Խորենացու ստեղծածը չեն այդ գծերը, ուստի և ոչ մի արժէք չունի այն թէ Խորենացու մէջ և արդի գրոյցի մէջ Շամիրամը վիճակ ու հեշտասէր է դուրս գալիս: Այդ կրնշանակէ միայն, որ նոր գրոյցի մէջ Շամիրամը, ինչպէս իւր անումը, նոյնպէս և իւր բնաւորութեան այդ երկու Էական գծերը պահել է: Բայց այդքան միայն: Էլ ուրիշ ոչ մի նմանութիւն չենք գտնում Շամիրամի մասին Խորենացու պատմածի և մեր արդի գրոյցի մէջ, որ բերում է Սարգիսեանը: Ի գուր է կարծում պ. Խալաթեանը թէ Խորենացու Ջրադաշտի և արդի գրոյցի ծերունու մէջ մի համեմատութիւն է գտել: Այդ երևակայական է միայն:

Բաղդատութեան համար մենք այստեղ կրրերենք Արտամետի գրոյցը, որի բնագիրը գտնելը դժուար է: Նկատենք առաջուց, որ մենք չենք վստահանում ասելու թէ Սարգիսեանը հաւատարմութեանը գրի առած լինի ժողովրդական գրոյցը, առանց այս կամ այն բանի մէջ ենթարկուելու Խորենացուն: Լեզբի գրոյցի մէջ նա ցոյց է տուել, որ ինքը հարագատ գրի առնող չէ:

Լուիցուք և գմիւս առասպելն գոր ասեն զՇամիրամայ, գոր և համառօտ բանիւ յիշէ Խորենացի ասելով Ուլունքի ծով Շամիրամայ: Թագուհին Շամիրամ որ մի ի հզօր և ի մեծագործ ինքնակալացն էր, շրջագայեալ, ասեն, երբեմն զքօսանաց աղագաւ յերկրին Վասպուրականի՝ տեսանէ ուրեք մանկունս խմբեալ ի մի. և մերձ եղեալ առ նոսա տեսանէ զի գտեալ նոցա ուլունս ի գետնի՝ ի գնին կան նոցին. իսկոյն ծանուցեալ զպատուականութիւն նոցա՝ առնու ի ձեռաց մանկանցն և պարգևս տուեալ արձակէ գնոսա: Ուլամբքն այնորքիւք սկսանի Շամիրամ մոգել և կախարդել, և ըստ ապականեալ սրտի իւրոյ զամենայն չարութիւն գործել ընդ երկիրն համօրէն. գոր կամէր առ ինքն կոչել ի լրումն տոփանացն՝ զօրութեամբ ուլանցն ոչինչ դրժուարէր, և գոր կամէր կորուսանել՝ և յայնմ յաջողէր անաշխատ, մինչև սասանել ամենայն ումեք և չկարել ճիկ հանել: Ծերոյ ուրեմն որ երթևեկէր առ նա և ամենայն իրաց նորա հմուտ և իբր խորհրդական էր, բազում ժամանակս խորհելով ի մտի թէ զիարդ գերծուսցէ զերկիրն ի ձեռաց նորա կամ ի զօրութենէ ուլանցն, յաւուր միում մինչդէռ յԱրտամետ քաղաքին էր ընդ թագուհւոյն, ժամ դիպող գտեալ՝ յափշտակեալ ի ձեռաց նորտ գուլունս փախչի: Ջայրացեալ Շամիրամայ և ի ցասման մեծի եղեալ յարձակի զհետ նորա, և չկարացեալ հասանել՝ առ

²¹ Իսկապէս չենք հաղկանում «Խորենացու ժամանակների յետնագոյն գրոյցների արձագանգներ» (отто лоски позднихъ сказаный) բառերով ինչ ե ուզում ասել պ. Խալաթեանը: Խնդիրը նորա համար այն չէ, թէ այդ գրոյցները Խորենացուց 1500-2000 տարի առաջ են ստեղծուած, թէ մի քանի հարիւր տարի միայն առաջ. այլ այն թէ եղել են Խորենացու ժամանակ գրոյցներ Շամիրամի մասին թէ չէ, և Խորենացին այդ գրոյցներից ե օգտուել թէ չէ շինին գրոյցները հնագոյն թէ ուշ ժամանակներում ստեղծուած:

անհնարին կատաղութեանն զգեսսն պարսատիկ գործեալ. քանզի յոյժ երկայն և թաւ էին, և ապառաժ մի ահեղ մեծութեամբ եղեալ ի նմա արձակէ զհետ ծերոյն. և առ մեծի բռնութեան գերծեալ հերացն ի գլխոյն՝ և ապառաժն մեծ գլորեալ անկանի ի փոս մի առ Արտամետաւ, զոր և ցուցանեն մինչև ցայսօր: Իսկ ծերն առեալ զուլունսն փախչի ի ծովեզերս Դատվանայ և անդ արկանէ ի ծով, և զերծանի երկիրն առ հասարակ ի մոգական չարութենէն Շամիրամայ: Ահաւասիկ զրոյցքն «Ուլունք ի ծով Շամիրամայ:»

Խորենացու պատմութեան և այս զրոյցի նմանութիւնն այն է, որ երկսի մէջ Շամիրամը մի վաւաշ ու չար վիռլ է, որ ունի ուլունքներ, որոնք վերջը ծովն են ընկնում: Սնացածն ամբողջապէս տարբեր է: Խորենացու մէջ ոչ մի բան չկայ այն մասին թէ ինչպէս է Շամիրամն ուլունքները ձեռք բերում. և այս կազմում է արդի զրոյցի առաջին մասը: Խորենացու մէջ չկայ և զրոյցի երկրորդ մասը թէ ուլունքները ինչ գորութիւն ունենին և թէ Շամիրամն ինչպէս իւր կիրքն էր կատարում անոնց գորութեամբ: Ըստ Խորենացու Շամիրամը հոմանիներ է ձեռք բերում ոչ թէ ուլունքներով, այլ նոցա «պարգևելով գամենայն իշխանութիւնս և զգանձս,» կամ «զկամս ցանկութեան» կատարել է տալիս, «ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգևաց,» ինչպէս Արայի զրոյցի մէջ է, — մի բան որ անում է և Իշտարը: Մենք չգիտենք՝ Խորենացու մէջ յուռուք — ուլունքներն ինչի են պէտք գալիս: Այնուհետև զրոյցի երրորդ մասն ևս չունի Խորենացին: Ջրադաշար Ատրեստանի կողմնապետն է, որին հաւատում է Շամիրամը իւր իշխանութիւնը, այսինքն կառավարութիւնը նորսն է թողնում: Նա ուզում է բռնանալ ի վերայ ամենայնի: Շամիրամ կռւում է նորա հետ, յաղթւում է, փոխչում է Հայաստան, ուր ամառներն անց էր կացնում, և այստեղ որդին սպանում է նորան: Մեռնելուց առաջ, ըստ առասպելին, նա ուլունքները ձգում է ծովը: Իսկ զրոյցի ծերունին երթևեկութիւն ունի Շամիրամի մօտ. «ամենայն իրաց նորա հմուտ և իբր խորհրդական էր.» այսինքն գիտէր, որ Շամիրամն ուլունքների գորութեամբ է չարութիւն գործում: Բարի ծերունին ժողովորդին ազատելու համար՝ խլում է ուլունքները ու փախչում: Շամիրամն ետևից ընկնում է. մագերը պարսատիկ շինում. և պոկում: Եւ այսքան միայն: Ջրոյցից մենք մինչև անդամ որոշ չգիտենք թէ արդեօք Շամիրամը մեռնում է թէ չէ: Միայն նորա ուլունքները ծերունին ծովն է ձգում և ժողովորդն ազատւում է նորա մոգական գորութիւնից: Ասել կարելի չէ թէ այս զրոյցը ստեղծուել է Խորենացու մի խօսքի ազդեցութեան տակ թէ Շամիրամ վաւաշ է և թէ «Ուլունք Շամիրամայ ի ծով:» Այս նոյնպէս կարող է Արտամետում պատմութեան Շամիրամի հին առասպելի մնացորդ լինել, ինչպէս Լեզքի Սուրբ Թոնրի առասպելն է: —

Աւելորդ չի լինիլ վերջում նկատել, որ Խորենացու բերած առասպելով Շամիրամի վախճանն ուրիշ տեսակ է լինում: Այստեղ

Շամիրամն իւր թշնամիներից հալածուած փախչում է. առասպելը պատմում է նորա «գիետնակ փախուստն, և գպասքումն և գիղձքս ջրոյն և գարբումն, այլ և ի մօտ հասանել սուսերաւորացն, և գյուղութսն ի ծով, և բան ի նմանէ՝ ուլունք Շամիրամայ ի ծով: Այլ... և Շամիրամ քար:» Շամիրամն ուրեմն իւր ուլունքները ծովը ձգելուց յետոյ քար է դառնում:

Ս. Աբեղեան.